Doi: 10.56737/2953-7843-2023.06-79

ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր
ՄՄ, ՀՀ ԳԱԱ ԱԻ, ԵՊՀ, ՀՌՀ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱՄՆԻ ԱՐԽԻՎԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կաթողիկոսական դիվանը, որը մաս է կազմել Էջմիածնի մատենադարանի ձեռագրական հավաքածուի, խորհրդային տարիներին այդ հավաքածուի հետ պետականացվել է եւ ներկայումս պահվում է Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվում։ Մատենադարանի կաթողիկոսական դիվանի մաս են կազմում շուրջ 2000 պարսկերեն վավերագրերը, որոնց մեջ են ոչ միայն Էջմիածնի կաթողիկոսների ձեռք բերած պարսկերեն զանազան փաստաթղթերը, այլեւ մի քանի հայկական վանքերի՝ մասնավորապես Ագուլիսի Սբ. Թովմա Առաքյալի, Դարաշամբի Սբ. Ստեփանոս Նախավկայի եւ Մակվի Սբ. Թադեի արխիվային նյութերը, ինչպես նաեւ Արցախի ու Ատրպատականի տարբեր վայրերից Խաչիկ վրդ. Դադյանի հավաքած վավերագրերը։

Մատենադարանի կաթողիկոսական դիվանի պարսկերեն վավերագրերը բարձրարժեք պատմական փաստաթղթեր են, որոնց բովանդակած տեղեկությունները եւ տվյալները մեծ կարեւորություն ունեն ԺԴ.–ԺԹ. դարերի ինչպես Իրանի, այնպես էլ Արեւելյան Հայաստանի ու հայ ժողովրդի, նաեւ հայ-իրանական հարաբերությունների պատմության ուսումնասիրության տեսանկյունից։ Դրանք միաժամանակ նաեւ Իրանի մշակութային հարուստ ժառանգության մաս են կազմում եւ կարեւորվում որպես պարսկերեն գրագրության նմուշներ։ Այս վավերագրերը մշտապես արժեւորել եւ բարձր են գնահատել հայ հետազոտողները, իսկ նախորդ դարի 50-ականներից Հ. Փափազյանի ջանքերով սկիզբ է դրվել նաեւ «Մատենադարանի պարսկերեն վավերագրերի» շարքի հրատարակությանը, որոնցում այդ վավերագրերը համակողմանի ուսումնասիրվել եւ հայերեն, ռուսերեն, հետագայում նաեւ անգլերեն թարգմա-

[1]* *Ստացվել է՝ 23.04.2023, գրախոսվել է՝ 2.05.2023։ էլ. հասցե՝* kr.kostikyan@gmail.com։

նութիւններով ու գիտական մեկնաբանութիւններով ներկայացվել են գիտական լայն շրջանակին։

Մի քանի տարի առաջ հայտնի դարձավ, որ ներկայումս Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի արխիվում եւս պահվում է պարսկերեն տասնյոթ վավերագիր։ Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք սերտորեն կապված են Մատենադարանի կաթողիկոսական դիվանի պարսկերեն փաստաթղթերի հետ, առնչվում են նույն խնդիրներին եւ լրացնում են միմյանց։

Ստորեւ կներկայացնենք վերոհիշյալ վավերագրերից մի քանիսը՝ համեմատելով եւ համադրելով դրանք Մատենադարանի համանման վավերագրերի հետ։

Ժամանակագրորեն հնագույն վավերագիրը Սեֆյան շահ Աբաս Բ.-ի հիջրայի 1060 թ. ռաբի՝ Ա. ամսի (1650 թ. մարտի 4 – ապրիլի 3) հրովարտակն է՝ հրապարակված Փիլիպոս կաթողիկոսի խնդրանքով (հ. 390)։ Վավերագրում նշվում է, քանի որ կաթողիկոսը, զգալի ծախս կատարելով, Կարսի կողմերից ջրանցք է կառուցել՝ այնտեղից 7–8 ջրաղաց աշխատեցնող ջուր բերելու համար, ուստի կարգադրվում է Վաղարշապատ գյուղի մանալ հարկի[2] գանձումը, որը նախկինում որպես համեսալե[3] տրամադրվում էր Երեւանի բեկլարբեկին, վանքի միաբաններին հանձնվի։ Նշվում է նաեւ, որ կաթողիկոսի խնդրանքին իր գրավոր համաձայնությունն է տվել նաեւ Երեւանի բեկլարբեկ Քեյխոսրով խանը։ 2014 թ. Մատենադարանի նորահայտ վավերագրերի շարքում հայտնաբերվել էր նույն վավերագրի պատճենը՝ առանց որեւէ նոտարական հաստատման, որի բնագիրը հայերեն թարգմանությամբ Հ. Գեւորգյանի հետ համահեղինակությամբ հրատարակել ենք «Բանբեր Մատենադարանի» հանդեսի էջերում[4]։ Էջմիածնի ար-

---

[2] *Մանալ* (منال) *– սկզբնաղբյուրներում եւ վավերագրերում երբեմն* մալ եւ ջահաթ *(*մալոջահաթ*) հարկային եզրույթի փոխարեն հանդիպում է* մալ եւ մանալ *(*մալոմանալ*) եզրույթը, որից կարելի է ենթադրել, որ ‘մանալ’-ը փոխարինում էր «ջահաթ» կամ «մութավաջջեհաթ» եզրույթներին։ Սակայն որոշ դեպքերում այն օգտագործվել է իրեն համանիշ «մալի» կամ ընդհանրապես «մալոջահաթի» իմաստով (Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ Բ., Երեւան, 1959, էջ 223)։*

[3] *Համեսալե* (همه ساله) *– այսպես էր անվանվում ռոճիկների հատուցման այն ձեւը, ըստ որի՝ ռոճիկ ստացող պաշտոնյան իրավունք էր ստանում, ցնոր տնօրինություն, ամեն տարի նույն վայրի հարկերի հաշվից ստանալու իր ռոճիկի գումարը։ Այսպիսի իրավունք ստացող զինվորականներն ու պետական պաշտոնյաները կոչվում էին «համեսալեդար» (Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ., էջ 221)։*

[4] Քրիստինե Կոստիկյան, Հ. Գեւորգյան, *Սեֆյան շահերի նորահայտ հրովարտակները Մատենադարանի կաթողիկոսական դիվանում, Բանբեր Մատենադարանի, 26, Երեւան, 2018, (58–75) էջ 68–70։*

խիվի վերոհիշյալ փաստաթուղթը, փաստորեն, հիշյալ վավերագրի բնօրինակն է, որի մասին հայտնի չի եղել ոչ մեզ, ոչ էլ 1959 թ. Մատենադարանի պարսկերեն հրովարտակների երկրորդ պրակը հրատարակության պատրաստած Հ. Փափազյանին։ Նա այդ պրակում ընդգրկել էր այս եւ մի քանի այլ խնդիրների շուրջ հրովարտակի ձեռք բերման նպատակով Փիլիպոս կաթողիկոսի՝ շահին ներկայացրած խնդրագիրը, որի վերին հատվածում առկա՝ շահի հակիրճ հրամանով կարգադրվել էր բարձրացված հարցերի շուրջ տրված պատասխաններին համապատասխան վարվել[5]։ Էջմիածնի արխիվի հիշյալ փաստաթուղթը ոչ միայն փաստում է այդ խնդրի կապակցությամբ առանձին հրովարտակ ձեռք բերված լինելու իրողությունը, այլեւ ապացուցում կաթողիկոսական դիվանի անգամ ոչ նոտարական պատճենների իսկությունը եւ համապատասխանությունը բնօրինակներին։

Այս հրովարտակի բովանդակության հետ որոշ կապ ունի նաեւ շահ Աբաս Բ.-ի ժամանակագրորեն հաջորդ՝ 1654 թ. (1065 թ. սաֆար ամսի) հրովարտակը (հ. 392), որով հաստատվում է մուղնեցի քրիստոնյա Դավթի (Դավուդ) հաղորդաբեն[6] Կարպի գետից՝ նույն չափով, ինչպես որ նախկինում շահ Թահմասպ Ա.-ի հրովարտակով էր հատկացված եղել. շաբաթվա մեջ մեկ օր։ Այս հրովարտակը թերեւս արտացոլում է Սիմեոն Երեւանցու «Ջամբռում» նշված իրողությունը հիշյալ ջրանցքի ջրօգտագործման կարգի վերաբերյալ, որի համաձայն՝ ջրի կեսը տրամադրվում էր Կարպիի շրջանի գյուղերին, որոնցից էր նաեւ Մուղնին, իսկ մյուս կեսը՝ գալիս հասնում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ հարակից գյուղը[7]։

Էջմիածնի արխիվի փաստաթղթերի մեջ կա Իրանի Սեֆյան հարստության վերջին շառավիղ Թահմասպ Բ.-ի անունից 1724 թ. երկու եւ 1732 թ. մարտին հրապարակված մեկ հրովարտակ։ Վերջինս փախուստի դիմած լինելով Սպահանից՝ 1722 թ. նոյեմբերին իրեն շահ էր հռչակել, դրամ էր հատում եւ հրովարտակներ հրապարակում, թեեւ նրա իշխանության ներքո էին ընդամենը Թավրիզի ու Մազանդարանի որոշ շրջաններ[8]։

Չնայած Սեֆյան Թահմասպ Բ.-ի իշխանության թուլությանը՝ Ամենայն Հայոց կաթողիկոսները, այնուամենայնիվ, կարեւորում էին նրա հրապա-

---

[5] Հ. ՓԱՓԱԶՅԱՆ, *հրովարտակներ, պրակ Բ., վավ. 39։*

[6] *Հաղորդաբեն կամ հակկաբե (حقابه) – ջրի այն բաժինը, որ հատկացվում էր որոշակի անձանց հողամասի, հանդի, այգու եւ մշակելի որեւէ այլ տարածության ոռոգման համար։*

[7] ՍԻՄԵՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ, *Ջամբռ, աշխ.՝ Հ. Օհանյանի, Երեւան, 2022, էջ 231։*

[8] *Տես* The Cambridge History of Iran, vol. 6 (The Timurid and Safavid Periods), edited by P. Jackson, Cambridge-London-New York-New Rochelle-Melbourne Sydney, Cambridge University Press, 1986, *էջ 326։*

րակած հրովարտակները եւ ջանում նրանից ձեռք բերել հայանպաստ փաստաթղթեր։ Մատենադարանի պարսկերեն հրովարտակների երրորդ պրակում արդեն ընդգրկվել է Նոր Ջուղայի հետ սերտ կապեր ունեցող Աստվածատուր կաթողիկոսի ձեռք բերած երկու հրովարտակ, որոնցից մեկը 1718 թ. վերահաստատում էր շահ Սուլթան Հուսեյնի 1710 թ. հրովարտակը կաթոլիկական քարոզչությունը հայության շրջանում սահմանափակելու մասին[9], եւ մյուսը՝ 1724 թ. հրամանագիրը, որով մի շարք դատական ու վարչական ատյաններում իրենց իրավունքները հաստատելուց հետո միայն նոր մահմեդականացած հայերին թույլ էր տրվում հավակնել իրենց քրիստոնյա ազգականների ունեցվածքին[10]։ Աբրահամ Երեւանցին 1724 թ. օսմանյան զորքերի՝ Երեւանի պաշարումն ու էջմիածին ժամանելը նկարագրելիս նշում է, որ այդ շրջանում Աստվածատուր կաթողիկոսը Թավրիզ էր գնացել՝ Թահմասպ Բ.-ին այցելության[11]։ Փաստորեն՝ այդ այցելության ժամանակ Աստվածատուր կաթողիկոսը ձեռք է բերել էջմիածնի արխիվի երկու հրովարտակները եւս, որոնք ուղղված են Մայր Աթոռի հարկային բեռի թեթեւացմանը. մեկն արգելում է մուսթաաջիրների[12] անօրինական պահանջները, մյուսը՝ մադադ-ե խարջ[13] եւ չերիքի[14] հարկերի գանձումը վանքից ու նրա միաբաններից[15]։

1724–1735 թթ. Երեւանի նահանգի (Զոխուր Սաադի վիլայեթ) մեծ մասը փաստացի գտնվում էր Օսմանյան կայսրության տիրապետության

---

[9] *Մատենադարան (ՄՄ), կաթողիկոսական դիվան (կ/դ), թղթ. 1գ, վավ. 272։*

[10] Ք. ԿՈՍՏԻԿՅԱՆ, *Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ Գ., Երեւան, 2005, վավ. 86։*

[11] ԱԲՐԱՀԱՄ ԵՐԵՒԱՆՑԻ, *Պատմութիւն պատերազմացն 1721–1736 թ. Յերեւան, 1938, էջ 14։*

[12] *Մուսթաաջիր* (مستآجر) *– գյուղերից ու այլ հարկատուներից գանձվող հարկերը հաճախ վարձակալության էին տրվում, որոնց վարձակալողները կոչվում էին մուսթաաջիրներ։*

[13] *Մադադ-ե խարջ* (مدد خرج) *– բառացի թարգմանվում է որպես ծախսերի համար նպաստ։ Հարկային առանձնաշնորհման մի տարբերակ է, որ տրվում էր որոշ պաշտոնյաների։ Այն գանձվում էր դեռեւս Սեֆյան ժամանակաշրջանում (տե՛ս Tadhkirat al-mulūk, A manual of Safavid administration* (circa 1137/1725), Persian text in Facsimile, translated and explained by V. Minorsky, London, printed by W. Heffer and sons LTD., 1943, *էջ 109, 183), բայց առավել հաճախ այդ հարկի մասին աղբյուրներում հիշատակություն կա Սեֆյան պետության անկմանը հաջորդած՝ մինչեւ ԺԸ. դարի վերջ ընկած ժամանակահատվածում։*

[14] *Չերիք կամ չերիքի ոսկի – «զար-ե չերիքի»։ Սա այն տուրքն էր, որ գանձվում էր ռայաթներից այն դեպքում, երբ քոչվորներից աշխարհազոր կամ «չերիք» էր հավաքվում։ Վաղ Սեֆյան շրջանում այն հատուցվում էր ոսկով (Հ. ՓԱՓԱՋՅԱՆ, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ I, Երեւան, 1956, էջ 117–118)։*

[15] *Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, արխիվ, վավ. 391 եւ 394։*

տակ, որի ընթացքում 1730 թ. դեկտեմբերին Թահմասպ Բ.-ն ռազմարշավ է ձեռնարկում դեպի այնտեղ, որը շարունակվում է մինչեւ հաջորդ տարվա գարունը։ Շահական զորքերը մոտենում են Երեւանի բերդին եւ 18 օր կանգ առնում նրա շրջակայքում, թեեւ չեն կարողանում գրավել այն՝ հարկադրված լինելով շուտով նահանջել[16]։ Այս ընթացքում Աբրահամ Բ. Խոշաբեցի կաթողիկոսին[17] հաջողվում է ստանալ ոչ միայն իր կաթողիկոսական իրավունքները հաստատող, այլեւ երկու այլ՝ հայերի համար օգտակար փաստաթուղթ, որոնք ուսումնասիրվել եւ հրատարակվել են[18]։ Էջմիածնի արխիվում պահվում է Թահմասպ Բ.-ի եւս մեկ՝ 1731 թ. վերաբերող հրովարտակ, որում, վկայակոչելով նախկին շահերի բարեհաճությունը վանքի նկատմամբ եւ բազում շնորհները, Թահմասպ Բ.-ն հայցում էր կաթողիկոսի ու վանականների օրհնությունն իր ռազմարշավը Երեւանի նահանգում հաջողությամբ ավարտելու համար, որից հետո իր այցելությամբ պետք է պատվեր նաեւ Մայր Աթոռը եւ նրա հոգեւորականներին (հ. 393)։

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արխիվի հրովարտակների շարքում հատուկ տեղ է զբաղեցնում Երեւանի Հուսեյն Ալի խանի 1760 թ. հրամանագիրը Հայոց Եկեղեցու, նրա հոգեւոր առաջնորդների ու հայ ժողովրդի իրավունքների վերաբերյալ (հ. 389)։ Այդ փաստաթղթով ամրագրվում էին Սեֆյան շահերի եւ ապա նաեւ Նադիր շահի՝ Հայոց Եկեղեցուն ու կաթողիկոսներին, նաեւ հայ ժողովրդին տված իրավունքները Կովկասում ձեւավորված իրանական տիպի պետականության առանձնահատկությունները կրող կիսանկախ Երեւանի խանությունում։ Փաստաթղթի խնդրագրի հատվածում թվարկվում եւ մատնանշվում են այդ իրավունքները 13 կետով եւ ապա վավերացվում կցված խանական հրամանագրով։ Փաստաթուղթն ստեղծվել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Շամախեցու նախաձեռնությամբ եւ նրա ներկայացրած խնդրագրի հիման վրա։ Խնդրագրում նշվում են Մայր Աթոռի տնտեսական իրավունքներն իր կալվածքների ու սեփականության նկատմամբ, որոշակի հարկերից ու տուրքերից ազատված լինելը, կաթողիկոսի ինքնուրույնությունն

---

[16] *Տե՛ս* Mīrzā Mahdī Khān Astarābādī, Tārīkh-i Jahāngushā-yi Nādirī, Tihran, Anjoman-i Asar va mafākher-i farhangi, 1277, *էջ 169–171։*

[17] *Աբրահամ Բ. Խոշաբեցին Ամենայն Հայոց կաթողիկոս է եղել 1730–1734 թթ.։*

[18] *Այս մասին տե՛ս* Ք. Կոստիկյան, *Թահմասպ Բ.-ի հայերին ուղղված հրովարտակները եւ 1730–31 թթ. նրա արշավանքը դեպի Երեւան, «Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ»,* XXIII, *Երեւան, 2004, էջ 356–371, նաեւ՝* Ք. Կոստիկյան, *հրովարտակներ, պրակ Գ., վավ. 88–90, էջ 25–26։*

իր ենթակաների եւ բարձրաստիճան հոգեւորականների նշանակման ու պաշտոնից ազատման հարցերում, նաեւ նրա բացառիկ իրավունքը հայության ներհամայնքային խնդիրները կարգավորելու եւ կրոնական օրենքները գործադրելու հարցում, Մայր Աթոռի սպասավորների եւ ուխտավորների՝ առանց մաքսատուրքերի երթեւեկության իրավունքները: Միաժամանակ արգելվում էին ամեն տեսակի ոտնձգությունները վանական կալվածքների նկատմամբ, Մայր Աթոռին ներկայացվող անհիմն ու անօրինական պահանջները, հայերի՝ մահմեդականություն ընդունելու պարտադրանքը եւ կրոնական արարողությունների անցկացմանը որեւէ կերպ խոչընդոտելը:

Երեք տարի անց Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի ջանքերով իր կաթողիկոսական իրավունքները հաստատող Քերիմ խան Զենդի հրովարտակով վերահաստատվում են նաեւ Հայոց Եկեղեցու եւ հայության վերոհիշյալ իրավունքները[19], որոնցում միայն մեկ կետ է ավելացվում Հայոց Եկեղեցու ապահարկությունը հաստատելու, նաեւ մի քանի այլ արտակարգ հարկերից ազատելու վերաբերյալ:

Հետագայում այս փաստաթղթերը հիմք են դառնում Ամենայն Հայոց կաթողիկոսի դիրքի եւ իրավունքների մեկ առ մեկ հստակ ձեւակերպումներով Ֆաթհալի շահի եւ Ատրպատականի փոխարքա թագաժառանգ Աբաս Միրզայի՝ Դավիթ եւ Եփրեմ կաթողիկոսներին տված հրովարտակների հրապարակման համար[20]:

Բացի վերը նշված հրովարտակներից՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի արխիվի փաստաթղթերի մեջ առկա են նաեւ Սեֆյան եւ հետագա շրջանի շարիաթական-նոտարական փաստաթղթեր:

Այս փաստաթղթերից չորսը վերաբերում են Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքին: Այս առթիվ հարկ է հիշել, որ Մատենադարանի կաթողիկոսական դիվանում է պահվում նաեւ այս վանքի արխիվը, որում կա պարսկերեն 50-ից ավելի փաստաթուղթ՝ այդ թվում նաեւ հնագույն՝ 1330/1 թթ. Աբու Սաիդ Իլխանի հրովարտակները՝ տրված այս վանքին[21]:

---

[19] *Այդ հրովարտակի պատճենն է պահպանվել, տե՛ս* Ք. ԿՈՍՏԻԿՅԱՆ, *Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ* IV, *Երեւան, 2008, վավ. 49:*

[20] Ք. ԿՈՍՏԻԿՅԱՆ, *Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ* V, *Երեւան, 2021, վավ. 8, 13, 31:*

[21] Հ. ՓԱՓԱԶՅԱՆ, *Երկու նորահայտ իլխանական յառլիղներ, Բանբեր Մատենադարանի, հտ. 6, 1962, էջ 379–401:*

1820–40 թթ. Ս. Ստեփանոսի վանահայրն էր Սարգիս Դավթյանը[22]։ Ինչպես հայտնի է դառնում Մատենադարանի որոշ պարսկերեն վավերագրերի բովանդակությունից, Ս. Ստեփանոս Նախավկայի վանքի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսը, ելնելով ժամանակի պահանջներից ու իր վանքի շահերից, համագործակցում էր իրանական իշխանությունների հետ՝ տեղեկություններ հաղորդելով ռուս-իրանական 1826–1828 թթ. պատերազմի ընթացքում ռուսական զորքերի գործողությունների մասին[23]։ Իրանական կողմը, բարձր գնահատելով Մաղարդավանքի վանահոր ծառայություններն ու նվիրվածությունը Իրանին, պաշտպանում էր վանքի շահերն ամեն տեսակի ոտնձգություններից ու օժանդակում նրա բարօրությանը։

1828 թ.՝ Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումից հետո, կազմակերպվում է իրանահայության ներգաղթը Ռուսաստանի տիրապետության տակ անցած հայկական շրջաններ, եւ շուրջ 45 հազար հայ հեռանում է Իրանից, որի հետեւանքով հայաթափվում է հիմնականում Ատրպատականի նահանգը։ Արդյունքում այնտեղի հայոց վանքերը զրկվում են իրենց թեմական բնակիչներից ու համայնքներից եւ կանգնում կործանման եզրին։

Այս պայմաններում Աբաս Միրզան հատուկ հոգածություն է հանդես բերում Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքի նկատմամբ, որը եւս ծանր վիճակում էր Ատրպատականի հայության արտագաղթից հետո։

1829 թ. թագաժառանգ Աբաս Միրզայի եւ նրա որդի Բահրամ Միրզայի (որը Խոյի կառավարիչն էր 1828–1829 թթ.)[24] հրամանագրերով Ս. Ստեփանոս Նախավկայի վանքին որպես թիուլ *հատկացվում է Դարաշամբ գյուղը[25], որն այնուհետեւ դառնում է վանքի* վակֆային *կալվածքը։*

Գյուղի վերաձեւակերպումը, որպես վակֆային կալվածք, իրավական բարդ գործարք էր, որը կարող էր կատարվել կալվածքի գնումից հետո։ Այս գործընթացի մաս են կազմել, թերեւս, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արխիվի պարսկերեն երեք փաստաթղթերը, որ վերաբերում են Սբ.

---

[22] Հ. Ոսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը, Բ. Մաս, Վիեննա, 1942, էջ 564։*

[23] *ՄՄ, կ/դ, թղթ. 1ե, վավ. 750, 751, 752։*

[24] *Տես* A. Nava'i, Bahrām Mīrzā, Moʿezz - Al -Dawla, Encyclopaedia Iranica, V ol. III, Fasc. 5, *էջ 524*, available online at http://ww w.iranicaonline.org/articles/bahram-mirza-moez z -al-dawla-the-secondson-of-the-crown-prince-abbas-mirza:

[25] *ՄՄ, կ/դ, թղթ. 1ե, վավ. 678, 754, տես* Ք. Կոստիկյան, *հրովարտակներ, պրակ* V, *վավ. 94, 95։*

Ստեփանոս Նախավկայի վանքին։ Դրանք կալվածագրեր են, որոնցով մաս-մաս գնվել է Դարաշամբ գյուղը։ Նախիջեւանի էհսան խանի հաստատմամբ կնքված այս բարդ գործարքով հայ վաճառականներ Խոջա Ղազարի եւ Խոջա Պետրոսի անվամբ ձեւակերպվել է գնում այդ գյուղի սեփականատեր Ֆաթհալի խան Քենգեռլուի ժառանգ Մոհիբ Ալիից, ապա հայ վաճառականներն իրենց գնած կալվածքները վաճառել են վանքի Սարգիս եպիսկոպոսին[26]։ Ինչպես նշվում է Մաղարդավանքի գլխավոր եկեղեցու շքամուտքի կամարակապ ճակատակալ քարի պարսկերեն արձանագրության մեջ, այդ գյուղի գնման համար վճարվել է ընդամենը 300 թուման, որից հետո այն ձեւակերպվել է նաեւ որպես վանքապատկան վակֆ[27]։ Թերեւս այդ արձանագրության բնագիրն է, որոշ տարբերություններով եւ հինգ վկաների հաստատմամբ, ներկայացված Մայր Աթոռի արխիվի պարսկերեն վավերագրերի շարքում՝ որպես համար 395։

Հարկ է նշել, որ ինչպես փաստում են Մատենադարանի կաթողիկոսական դիվանի մի քանի փաստաթղթեր, այդ գյուղի նկատմամբ հավակնություններ են ունեցել նաեւ այլ անձինք. մասնավորապես կազմվել է համախոսական գրություն, որով 17 անձանց վկայությամբ հաստատվել է այդ կալվածքի վաճառված լինելը Մոհիբ Ալիի կողմից վանքի Սարգիս վանահորը, այլ ոչ Վարմազիարցի ոմն Մուհամմադ Հուսեյն Բեկին[28]։ Մեկ այլ փաստաթուղթ էլ կազմվել է որպես տեղեկանք այն մասին, որ Դարաշամբի մի կեսը 150 թումանով գնելուց հետո Սարգիս վանահայրը գնում է նաեւ մյուս կեսը՝ 160 թումանով[29], որից հետո այն ձեւակերպվել է որպես վանքին արված նվիրատվություն (հոբբե)։

Հետագայում եւս այս գյուղի պատկանելությունը վանքին հաստատվել է թե՛ տեղական իշխանությունների եւ թե՛ Ղաջար Նասրեդդին շահի հրամանագրերով[30]։ Ինչպես փաստում են նաեւ հայկական աղբյուրները, Դարաշամբ գյուղն այնուհետեւ՝ ողջ ԺԹ. դարի ընթացքում, շարունակում էր պատկանել վանքին[31]։ ԺԹ. դարի մի շարք հրովարտակներ արգելում

---

[26] *Տե՛ս ստորեւ ներկայացված հ. 396 եւ 397 փաստաթղթերի նկարագրությունները։*

[27] Ա. Հախնազարյան, *Արտազի երեք վանքերը, Երեւան, 2012, էջ 308։*

[28] *ՄՄ, կ/դ, թղթ. 1ե, վավ. 764։*

[29] *ՄՄ, կ/դ, թղթ. 1ե, վավ. 765։*

[30] *ՄՄ, կ/դ, թղթ. 1ե, վավ. 762, 678, 776, 792, 794բ, 797, նաեւ՝ Ազգային արխիվ, ֆոնդ 57, ցուցակ 1, գործ 285։*

[31] Ա. Հախնազարյան, *նշ. աշխ., էջ 224։*

են հարեւան մահմեդականներին՝ մասնավորապես վարմազիարցիներին, ոտնձգություններ կատարել վանքի կալվածքների ու նրա եկամուտների նկատմամբ[32]։ Վերոհիշյալ ցեղի ոտնձգություններից վանքի պաշտպանության հարցերին է վերաբերում նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արխիվի մի անթվակիր նամակ՝ գրված (ըստ կնիքի) Աղալար Գորջիից Խոյի բեկլարբեկ Նաջաֆղուլիին, այնտեղի վանահայր Հովհաննեսի բարձրաձայնած այդ խնդրի կապակցությամբ (հ. 91)։ Հ. Ոսկյանը նշում է, որ Ս. Ստեփանոս Նախվկայի Սարգիս վանահորը հաջորդում են Հովհաննես Գալստյանը եւ Հովհաննես Ավետյանը, որոնցից հետո 1864 թ. վանահայր էր Մեսրոպ Սմբատյանը[33], ուստի այս նամակը հավանաբար գրվել է 1840–1864 թվականների միջեւ ընկած ժամանակահատվածում։ Դարաշամբ գյուղն Ատրպատականի այն եզակի գյուղերից էր, որ հայաբնակ է մնում մինչեւ Ի. դարի կեսերը, եւ այս ընթացքում այնտեղ ժամանակ առ ժամանակ ապաստան էին գտնում տարածաշրջանում բախումների միջոցին այլ վայրերից գաղթած հայեր[34]։

Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի արխիվի պարսկերեն վավերագրերից մի քանիսն էլ վերաբերում են Մայր Աթոռի կալվածքներին ու խնդիրներին։ Մեզ հայտնի՝ պարսկերեն 17 վավերագրերի նկարագրությունների ցանկը ներկայացված է սույն հոդվածի հավելվածում։

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի արխիվի վերոհիշյալ վավերագրերը, ըստ երեւույթին, ժամանակին կաթողիկոսական դիվանի մաս են կազմել, բայց այդ հավաքածուի հետ չեն պետականացվել եւ այնուհետեւ նրա հետ չեն բերվել Մատենադարան։ Նրանց մեջ կան պատմական արժեքավոր փաստաթղթեր, որոնք լրացնում են Մատենադարանի արխիվի պարսկերեն վավերագրերի տեղեկություններն ու տվյալները եւ հանդիսանում հայոց պատմության արժեքավոր սկզբնաղբյուրներ։ Այս հանգամանքով պայմանավորված՝ հոդվածին կցում ենք վերոհիշյալ վավերագրերի նկարագրությունները, որոնք հնարավորություն կտան հետազոտողներին անհրաժեշտության դեպքում փաստաթղթերում առկա տվյալներն օգտագործելու իրենց գիտական աշխատանքներում, քանի որ մինչ այժմ դրանք նկարագրված չեն եղել եւ անհայտ են մնացել գիտական շրջանակներին։

---

[32] *ՄՄ, կ/դ, թղթ. 1ե, վավ. 753, 763, 775, 776։*

[33] Հ. Ոսկեան, *նշ. աշխ., էջ 564։*

[34] Ա. Հախնազարեան, *նշ. աշխ., էջ 224։*

ՀԱՎԵԼՎԱԾ

Վավերագրերի նկարագրություններ.

1. Հ. 389, բնագիր, մեծ. 47,5 *x* 67 սմ, գիր՝ նասթա՛լիղ՝ շիֆասթեի տարրերով: Երեւանի Հուսեյն Ալի խանի հիջրայի 1173 թ. շա՛բան ամսի 4 (1760 թ. մարտի 10) հրովարտակը՝ հրապարակված Հակոբ Շամախեցի կաթողիկոսի ներկայացրած խնդրագրի հիման վրա՝ Հայոց Եկեղեցու ու Էջմիածնի Մայր Աթոռի նշված 13 կետերով շարադրված իրավունքները հաստատելու վերաբերյալ:

2. Հ. 390, բնագիր, մեծ. 28 *x* 59,5 սմ, գիր՝ նասթա՛լիղ շիֆասթեի տարրերով: Շահ Աբաս Բ.-ի հիջրայի 1060 թ. ռաբի՝ Ա. ամսի (1650 թ. մարտի 4– ապրիլի 3) հրովարտակը Փիլիպոսը կաթողիկոսի խնդրանքով, որտեղ նշվում է, որ կաթողիկոսը, զգալի ծախս կատարելով, Կարսի կողմերից ջրանցք է կառուցել, այնտեղից 7–8 ջրաղաց աշխատեցնող ջուր բերել: Ուստի Վաղարշապատ գյուղի մանալը, որը նախկինում որպես համեսալե տրամադրվում էր Երեւանի բեկլարբեկին, այսուհետեւ պետք է վանքի միաբաններին հանձնվի: Նշվում է, որ կաթողիկոսի խնդրանքին իր գրավոր համաձայնությունն է տվել նաեւ Երեւանի բեկլարբեկ Քեյխոսրով խանը:

3. Հ. 391, բնագիր, մեծ. 23 *x* 58 սմ, գիր՝ նասթա՛լիղ՝ շիֆասթեի տարրերով: Շահ Թահմասպ Բ.-ի 1136 թ. ջումադի Ա. ամսի (1724 թ. հունվարի 27 – փետրվարի 26) հրովարտակն է՝ ուղղված Երեւանի բեկլարբեկին, որով կարգադրվում է մալոջահաթը վճարող Էջմիածնի Աստվածատուր կաթողիկոսին ու միաբաններին չերիքի, մադադ-ե խարջի եւ այլ պահանջներով չանհանգստացնել:

4. Հ. 392, բնագիր, մեծ. 25 *x* 45,5 սմ, գիր՝ նասթա՛լիղ՝ շիֆասթեի տարրերով, վնասված, պատովածքներով: Շահ Աբաս Բ.-ի հիջրայի 1065 թ. սաֆար ամսի (1654 թ. դեկտեմբերի 11 – 1655 թ. հունվարի 9) հրովարտակը մուղնեցի քրիստոնյա Դավուդի հաղորդեն Կարպի գետից նրա տնօրինմանը հանձնված լինելու հաստատմամբ:

5. Հ. 393, բնագիր, մեծ. 23 *x* 45 սմ, գիր՝ նասթա՛լիղ՝ շիֆասթեի տարրերով: Շահ Թահմասպ Բ.-ի հիջրայի 1143 թ. շավալ ամսի (1731 թ. ապրիլի 9 – մայիսի 8) հրամանագիրն Էջմիածնի կաթողիկոսին եւ միաբաններին, այն մասին, որ քանի որ իր նախնիները մշտապես նվերներ են ուղարկել վանքին եւ Հիսուս մարգարեի օրհնությունն ստացել, այժմ էլ, որ նա եկել է Զոխուր

Սաադի վիլայեթ (Երեւանի նահանգ), բայց պատերազմական թոհուբոհի մեջ է, եւ այցելության պատեհ պահը չէ, ուստի կաթողիկոսը եւ բոլոր հոգեւորականները պետք է Հիսուս եւ Մուսա մարգարեների օգնությունը հայցեն, որպեսզի դրանից հետո Ալլահի կամքով այդ [Նորին Մեծության այցելության] պատվին արժանանան:

6. Հ. 394, բնագիր, մեծ. 23 *x* 43,5 սմ, գիր՝ նասթա՛լիղ շիքասթեի տարբերով: Շահ Թահմասպ Բ.-ի հիջրայի 1136 թ. ջումադի Ա. ամսի (1724 թ. հունվարի 27 – փետրվարի 26) հրովարտակն էջմիածնի Աստվածատուր կաթողիկոսին մուսթա՛աջիրների ու զաբիթների[35] անօրինական պահանջները վանքի միաբաններից իրենց հողերը մշակելու համար արգելելու մասին:

7. Հ. 395, բնագիր, մեծ. 22,5 *x* 35 սմ, գիր՝ նասթա՛լիղ շիքասթեի տարբերով: Սբ. Ստեփանոս Նախավկայի դարբասին ամրացված մարմարի վրայի արձանագրության պատճենը, որի համապատասխանությունը բնագրին հաստատված է 5 անձանց կնիքներով: Նշվում է, որ Ֆաթհալի շահի օրոք Աբաս Միրզայի ողորմածությամբ Դարաշամբ որպես թիուլ հատկացվեց Դանիելի վանքի վանահայր Ստեփան Ջուղայեցու որդի Սարգիս վանահորը, նա էլ գնեց այն հանգուցյալ Ֆաթհալի Բեկի որդի Մոհիբ Ալի Բեկից 300 թումանով եւ վակֆ արեց վանքին, որպեսզի իրենից հետո մյուս վանահայրերը նրա եկամուտները ծախսեն վանքի համար: Որպես թիուլ նվիրված լինելու թվական նշվում է հիջրայի 1240 թ. (1824/5 թ.), իսկ գնման եւ վակֆ արվելու թվական՝ հիջրայի 1246 թ. (1830/1):

8. Հ. 396, բնագիր, մեծ. 33 *x* 100 սմ, գիր՝ նասթա՛լիղ շիքասթեի տարբերով: Կալվածագիր՝ գրված հիջրայի 1244 թ. զի հեջջե ամսի 1-ին (1829 թ. հունիսի 4 – հուլիսի 3), որով Ֆաթհալի խան Քենգեռլուի տոհմից Մոհիբ Ալին վաճառում է Ս. Դանիելի վանքի Սարգիս վանահոր որդի Ղազարին Դարաշամբի կեսը (բացի 4 քար ջրաղացից եւ մի քանի կտոր այգուց) 100 Թավրիզի թուման գումարով եւ 30 թումանով էլ մուսալեհե է կնքում (ընդհանուր 130 թուման): Վավերագրի վերին ճակատային մասում գրված է, որ Մոհիբ Ալին, նույն տարվա զի հեջջե ամսի 1-ին այդ կալվածքը վաճառած լինելով Խոջա Սարգսի որդի Խոջա Ղազարին, հաջորդ օրը՝ զի հեջջեի

---

[35] *Զաբիթ (ضابط) – գրավոր, բռնագրավող: ԺԷ.–ԺԸ. դարերում* զաբիթ *էին կոչվում նաեւ պետական հարկերի վարձակալները, որոնք, նախապես որոշ գումար մուծելով պետական գանձարանը, իրավունք էին ստանում տվյալ հարկատուի հարկերը գանձելու (Հ.* Փափաջյան, *հրովարտակներ, պրակ Բ., էջ 215):*

երկուսին, Խոջա Ղազարը այն նույն գումարով վաճառում է նույն վանքի վանահայր Սարգսին:

9. Հ. 397, բնագիր, մեծ. 33 *x* 100 սմ, գիր՝ նասթա՛լիղ շիֆասթեի տարրերով: Կալվածագիր գրված հիջրայի 1244 թ. զի հեջջե ամսի 1-ին (1829 թ. հունիսի 4), որի համաձայն՝ Դանիելի վանքի Սարգիս վանահայրը վաճառում է Դարաշամբի կեսը (բացի 4 քար ջրաղացից եւ մի քանի կտոր այգուց) Գասպարի որդի Խոջա Պետրոսին 100 թուման Թավրիզի ռիալ 1000 փանահաբադի դինար եւ բաջաղլու 8000 դինարով, նաեւ մուսալեհե է կնքում 30 թումանով (ընդհանուր 130 թուման): Փաստաթղթի վերին ճակատային հատվածում գրությամբ նշվում է, որ գործարքի հաջորդ օրը զի հեջջեի 2-ին (հունիսի 5) Սարգիս վանահայրը նույն գումարով այդ նույն վաճառված մասը հետ է գնում Խոջա Պետրոսից: Փաստաթղթի վավերականությունը հաստատված է նախորդ գրությունից ավելի վեր՝ դրված գնդապետ (պոլկովնիկ) Նախիջեւանի էհսան Խան Քենգերլուի կնքադրոշմով:

10. Հ. 398, բնագիր, մեծ. 33 *x* 83 սմ, գիր՝ նասթա՛լիղ շիֆասթեի տարրերով: Կալվածագիր գրված հիջրայի 1244 թ. զի ղաադե ամսին (1829 թ. մայիսի 5 – հունիսի 4), որով Ֆաթհալի Բեկ Քենգեռլուի ժառանգ Մոհիբ Ալի Բեկը վաճառում է Դիբբենդի եւ Օրթաբենդի, որ կոչվում է Դարաշամբ, 10,5-ը (یک عشر و نیم) Դանիելի վանքի վանահայր Սարգիս խալիֆայի 260 Թավրիզի թումանով: Փաստաթուղթը հաստատված է 30-ից ավելի վկաների կնիքներով:

11. Հ. 452, բնագիր, մեծ. 30 *x* 89 սմ, իրար միացված երկու փաստաթուղթ, գիր՝ նասթա՛լիղ շիֆասթեի տարրերով: Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի խնդրագիրը վանքի հետեւյալ հարցերի շուրջ եւ համապատասխան Երեւանի Աբաս Ղուլի բեկլարբեկի հրահանգները.

Ա. հայցում է բեկլարբեկի օժանդակությունը Մայր Աթոռի բարեկարգմանը, որը կնպաստի այնտեղի միաբանների ավելացմանը,

Բ. քանի որ հնագույն ժամանակներից վանքի տնտեսության անասունները, արոտավայրի համար հարմար տեղ չունենալով, օգտվում էին մոտակայքում գտնվող Բաթինջ գյուղի արոտավայրերից, որոշ ժամանակ առաջ այնտեղ հաստատվել էր քյուրահանլու ցեղը եւ հարեւան հայկական գյուղերին անհանգստություն էր պատճառում, ուստի բարձրագույն ատյանին դիմելով՝ հրովարտակ է ձեռք բերում՝ ուղղված Մուհամմադ Ղուլի բեկլարբեկին՝ նրանց այնտեղից վտարելու վերաբերյալ եւ դա իրականացնելով՝ իր մարդկանց էր ուղարկել ու շենացրել այն եւ օգտագործում էր վանքի կեն-

դանիների կերակրման համար, իսկ դրա հարկերը մաղթա[36] էր արել, ուստի խնդրում է վերահաստատել այդ իրավունքը: Ստորին մասում արված մակագրությամբ նշված է, որ մաղթա է արված եղել տարեկան 7 թումանով:

Գ. քանի որ ձմռան սաստիկ ցրտերի ժամանակ էջմիածին մտնող գետերը սառցակալում են, եւ ջուր չի հասնում, 400 թուման ծախսելով՝ ստորգետնյա ջրանցքներ է կառուցել, ուստի խնդրում է, որ թույլ տրվի այդ ջրանցքներով հասցվող ջրի ավելցուկն օգտագործել վանքի անմշակ հողերը մշակելու եւ դրանց մալիյյեն օգտագործելու այդ ջրանցքները նորոգելու եւ սարքին պահելու վրա, նաեւ ցանկանում է բաղնիք կառուցել եւ հուսով է, որ իր խնդրանքը ողորմածության կարժանանա: Ստորին մասում մակագրություն կա, ըստ որի՝ ֆյարիզի ավելցուկ ջրով հողամշակության համար որեւէ մալիյյե[37] նշանակված չէ, եւ ինչպես որ կկարգադրվի, այնպես կարվի (հմմտ. Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1079-ի հետ):

12. Հ. 453, բնագիր, մեծ. 24,5 *x* 40,5 սմ, նորոգված, վնասված: Շարիաթական փաստաթուղթ՝ գրված հիջրայի 1084 թ. մուհարրամ ամսի 20-ին (1673 թ. մայիսի 7), ըստ որի՝ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսն իր սեփականությունից 14 թուման վճարում է էջմիածնի վակֆային մուլքերի համար՝ որպես իխրաջաթ[38], եւ դրա դիմաց երկու տարով վարձակալում Աշտարակում գտնվող մի այգի, որից հետո այդ այգին նրա մեջ մտնող ամեն ինչով վակֆ է անում Սաղմոսավանքին՝ հանձնելով այն Գաբրիել վարդապետի տնօրինմանը: Լուսանցքում հաստատված է Հակոբ կաթողիկոսի եւ հետագա Եղիազար, Նահապետ եւ Աբրահամ կաթողիկոսների կողմից:

13. Հ. 454, բնագիր, մեծ. 31,5 *x* 44 սմ, գիր՝ շիքասթե, խառը Կալվածագիր՝ գրված հիջրայի 1241 թ. մուհարրամ ամսի 1-ին (1825 թ. օգոստոսի 16), որով էջմիածնեցի Սարգսի որդի Հարությունը (Արիթուն) Երանոսի որդի Սարգսի լիազորագրով վաճառեց էջմիածնում գտնվող մեկ կտոր այգին վան-

---

[36] *Մաղթա (مقطع) – կտրված, որոշված, վերջնական: Մթերքի որոշակի քանակ կամ հաստատուն գումար, որ ամեն տարի պարբերաբար կերպով, անկախ հարկատուի տվյալ տարվա բերքից, պետք է հատուցվեր կալվածատիրոջը կամ պետությանը՝ որպես հարկ (Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա., էջ 113):*

[37] *Մալիե (مالیه) – ԺԵ. դարից եւ ավելի վաղ ժամանակներից գոյություն ունեցող գլխավոր եկամտահարկի «մալի» տարբերակներից, որ ավելի գործածական դարձավ ԺԸ. դարում եւ փոխարինում էր «մալին» կամ «մալոջհաթին» (Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ., էջ 222):*

[38] *Իխրաջաթ (اخراجات) – բառացի նշանակում է «ծախսեր»: Այդպես էին կոչվում այն արտակարգ ծախսերը, որ տարբեր առիթներով ռայաթները պարտավոր էին հատուցել պետությանը կամ նրա պաշտոնյաներին (Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա., էջ 110):*

ֆի լուսարար Օվանեսին՝ 100 երեւանի թուման գումարով, նաեւ մեկ փանահաբադի դինար գումարով էլ մուսալեհե կնքեց:

14. Հ. 455, բնագիր, մեծ. 27,5 *x* 20 սմ, գիր՝ նասթա՛լիղ շիֆասթեի տարրերով: Շարիաթական փաստաթուղթ՝ գրված հիջրայի 1164 թ. (1750/1 թ.) Փիրի Դարվիշի պատկանելության հարցի շուրջ տեղի ունեցած վեճի կապակցությամբ: Էջմիածինը որոշակի գումար է վճարում պահանջատերերին, որը բաժանվում է նրանց միջեւ, եւ մուսալեհե է կնքվում, որ նրանք հրաժարվում են իրենց պահանջներից:

15. Հ. 91, բնագիր, մեծ. 21,5 *x* 33սմ, գիր՝ խառը: Նամակ (ըստ կնիքի) Աղալար Գորջիից սարքարի ծառա Խոյի բեկլարբեկ Նաջաֆղուլիին, Դանիելի վանքի վանահայր Հովհաննեսի խնդրի շուրջ (ԺԹ. դարի կե՞ս): Նշվում է, որ վարմազիարցիները նրա մուլքերից եւ եկամուտներից յուրացնում են եւ վնասում նրան, այդ պատճառով անհրաժեշտ եղավ այդ մասին զեկուցել եւ հրամանագիր խնդրել, որպեսզի կարգադրվի վարմազիարցիներից մի քանի գեղջավագների եւ գյուղացիների կողմից պարտավորագիր տալ, որպեսզի այն, ինչ անցյալ եւ նախանցյալ տարիներից մնացել է, հարկահավաքների միջոցով վանքին վերադարձնեն եւ այլեւս վնաս չհասցնեն:

16. Հ. 459, բնագիր, մեծ. 34 *x* 130 սմ, գիր՝ նասխ, նասթա՛լիղ շիֆասթեի տարրերով: Խոջա Սեթի որդի Խոջա Հակոբի հիջրայի 1069 թ. ռաբի Ա. ամսի (1658 թ. նոյեմբերի 27 – դեկտեմբերի 27) վակֆնամեն, որով վակֆ է անում Երեւանի Նորագեղը ամբողջությամբ, Եղվարդի 4,5 դանգը իրենց մեջ մտնող ամեն ինչով, Երեւանում գտնվող մեկ դուռ այգին, Դարաբեղում գտնվող մեկ դուռ այգին եւ մեկ դուռ ջրաղացը էջմիածնի վանքին՝ հանձնելով այն Հակոբ կաթողիկոսի տնօրինմանը: Ստորագրված ու հաստատված է Աղվանից Սիմեոն կաթողիկոսի եւ 20-ից ավելի անձանց անուններով ու կնիքներով: Նույնաբովանդակ վակֆնամե կա նաեւ Մատենադարանի կաթողիկոսական դիվանում (կ/դ, թղթ. 1բ, վավ. 108), որը հրատարակվել է[39]:

17. Հ. 456, պատճեն, մեծ. 38 *x* 54 սմ, գիր՝ նասթա՛լիղ շիֆասթեի տարրերով: Ֆաթհալի շահի Դավիթ կաթողիկոսի անունով հիջրայի 1219 թ. ջոմադի Բ. ամսի (1804 թ. օգոստոսի 8 – սեպտեմբերի 9) հրովարտակն էջմիածնի եւ հայ հոգեւորականների իրավունքների հաստատմամբ[40]:

---

[39] Ք. ԿՈՍՏԻԿՅԱՆ, Մ. ԽԵՉՈ, *Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, մաս* III, *Շարիաթական նոտարական փաստաթղթերը (ԺԷ.-ԺԸ. դդ.), Երեւան, 2018, վավ. 10:*

[40] *Այս վավերագրի բնօրինակը պահվում է Մատենադարանի կաթողիկոսական դիվանում եւ հրատարակվել է (տե՛ս* Ք. ԿՈՍՏԻԿՅԱՆ, *հրովարտակներ, պրակ* V, *վավ. 8):*

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Պարսկերեն պատմական փաստաթղթեր, կաթողիկոսական դիվան, հրովարտակ, վակֆային կալվածք:

РЕЗЮМЕ

В статье исследована историческая ценность некоторых персидских документов, хранящихся в архиве Первопрестольного Святого Эчмиадзина, их связь с персидскими документами из архива католикосата, хранящегося в Матенадаране. Среди этих документов указы Сефевидских шахов Аббаса II и Тахмаспа II. По своему содержанию исключительную ценность для истории Армянской Церкви представляет указ Хусейн Хана Ереванского от 1760 г., подтверждающий права и привилегии Первопрестольного Святого Эчмиадзина. Данный указ изложен в тринадцати пунктах прошения католикоса Акопа Шамахеци. Четыре документа названной коллекции дополняют историю монастыря Святого Степанноса в Дарашамбе, оказавшегося в тяжелом положении после эмиграции местного армянского населения в 1828–1829 гг. Документы, составленные в шариатском суде, отразили довольно сложный процесс приобретения села Дарашамб в качестве вакуфного имущества данного монастыря при содействии наследного принца Аббаса Мирзы – правителя региона. В статье представлены также аннотации всех известных нам 17-и персидских документов, хранящихся в архиве Святого Престола.

SUMMARY

The article considers the historical value of some Persian documents kept in the archive of the Mother See of Holy Etchmiadzin, the links between these documents and the ones kept in the Archive of the Catholicosate kept in the Matenadaran. The decrees of the Safavid Shahs Abbas II and Tahmasb II are among those considered in the article. The decree of Huseyn Khan of Yerevan dated 1760 and the confirmation of the rights and privileges of Holy Etchmiadzin, mentioned in 13 points of the petition of Catholicos Hakob Shamakhetsi, is of great importance for the history of

the Armenian Church. Four documents of the collection refer to the history of St. Stepannos Monastery and supplement it. The state of the monastery was very hard after the migration of local Armenians in 1828–1829. The documents composed in Shari‘yya court have reflected the compound process of the establishment of the village of Darashamb as vaqf property of the monastery through the assistance of crown prince Abbas Mirza. The article contains also the list of annotations of 17 Persian documents, known to us, and kept in the archive of the Mother See of Holy Etchmiadzin.